

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-8-4-Ա

ք. Երևան

06.10.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի հոկտեմբերի 6-ի նիստում քննարկեց 2022 թվականի մայիսի 3-ին ներկայացուցիչ Հարություն Միքայելյանի կողմից ներկայացված՝ «Գետափի գինու կոնյակի գործարան» ՍՊԸ ընկերության (ՀՀ, Արարատի մարզ, գյուղ Վանաշեն 0622, AM) «БЛАГОРОДНЫЙ» (№20211950) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն բացառապես բաղկացած է «Благородный» (ազնվական) բառից, որը հանդիսանում է նկարագրական բնույթի նիշ՝ նշելով ապրանքի տեսակը: Ազնվական են համարվում այն ալկոհոլային խմիչքները, որոնք արտադրության ընթացքում անցել են հնեցման գործընթաց: Դրանց թվին են պատկանում բոլոր տեսակի գինիները, կոնյակը, լիկյորը և այլ ալկոհոլային խմիչքներ: Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն բացառիկ իրավունքը չի տարածվում ապրանքային նշանի այն տարրերի վրա, որոնք չեն կարող գրանցվել որպես ապրանքային նշան, մասնավորապես նկարագրական բնույթի տարրերի վրա, դրանք բարեխիղճ օգտագործելու և երրորդ անձանց օրինական շահերը չխախտելու պայմանով: Անդրադառնալով կրկնական փորձաքննություն անցկացնելու մասին դիմումի մեջ առկա այն դիտարկմանը, թե «...ՀՀ-ում ալկոհոլային խմիչքների արտադրությունը կարգավորող իրավական ակտերով, արտադրության տեխնիկական կանոնակարգով, սահմանված գոտերով ալկոհոլային խմիչքների դասացանկի մեջ գոյություն չունի «ազնվական»

ալկոհոլային խմիչք դասակարգումը», ապա ցանկանում ենք տեղեկացնել, որ մերժման հիմքում դրվել է տարիներ ի վեր խոսակցական և առևտրային պրակտիկայում լայն շրջանառության մեջ մտած, որոշակի տեսակի ալկոհոլային ըմպելիքների նկատմամբ կիրառվող «Благородный» բառը, որը միտված է բնութագրել խմիչքի որակական հատկանիշները, ինչի մասին տեղեկատվությունը առկա է նաև համացանցում՝ <https://kartaslov.ru/%D0%B7%D0%BD%D0%B0%D1%87%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5-%D1%81%D0%BB%D0%BE%D0%B2%D0%B0/%D0%B1%D0%BB%D0%B0%D0%B3%D0%BE%D1%80%D0%BE%D0%B4%D0%BD%D1%8B%D0%B9+%D0%BD%D0%B0%D0%BF%D0%B8%D1%82%D0%BE%D0%BA>,

https://aif.ru/food/products/portveyn_sovetskiy_pochemu_blagorodnyy_napitok_prevratilsya_v_tri_topora:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն բացառապես բաղկացած է «Благородный» (ազնվական) բառից, որը հանդիսանում է նկարագրական բնույթի նիշ՝ նշելով ապրանքի տեսակը: Ազնվական են համարվում այն ալկոհոլային խմիչքները, որոնք արտադրության ընթացքում անցել են հնեցման գործընթաց: Դրանց թվին են պատկանում բոլոր տեսակի գինիները, կոնյակը, լիկյորը և այլ ալկոհոլային խմիչքներ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել ներկայացուցիչ Հարություն Միքայելյանի կողմից ներկայացված «Գետափի գինու կոնյակի գործարան» ՍՊԸ ընկերության «БЛАГОРОДНИЙ» (№20211950) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ